ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. 2. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 346
11 դեկտեմբերի 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Կ. Գուլոյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/ 15.1/1607-17 գրության Ձեզ ենք ուղարկում Մրգաշեն համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր 2 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06 » դեկտեմբերի 2017 թվականի N 113

ՍԱԹԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԽՆԴՐԱՆՔԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշումը և 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 33,34 կետերի պահանջները և այն հանգամանքը, որ Մրգաշեն համայնքի 1-ին փողոց 15-րդ նրբ. թիվ 3 հասցեում գտնվող 0.0858հա մակերեսով բնակելի կառուցապատման նշանակության, 0034-0032 ծածկագրով իր սեփական հողամասի վրա Սաթիկ Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը ընդհանուր 214,9քմ մակերեսով չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օտարման կամ անվտանգության թաղամասի կառուցապատման պլաններին և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը՝ *որոշում եմ*

3. Համապատասխան վճարով ճանաչել օրինական գյուղ Մրգաշեն 1-ին փողոց 15-րդ նրբ. թիվ 3 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Սաթիկ Գրիգորյանին պատկանող հողամասում ինքնակամ կառուցած բնակելի տունը:
   2) բնակելի տուն 214.9քմ, մեկ քառակուսի մետրի արժեքը 1300դրամ, ընդամենը 279370դրամ:
4. Ճանաչել օրինական գյուղ Մրգաշեն 1-ին փողոց 15-րդ նրբ. թիվ 3 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Սաթիկ Գրիգորյանին պատկանող բնակելի տունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 06
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» դեկտեմբերի 2017 թվականի N 114

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին»ՀայաստանՀանրապետության օրենքի 37 հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, 84 հոդվածի 2-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27 հոդվածի պահանջներով *որոշում եմ.*

1. Մրգաշեն համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին
3. Մրգաշենի համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական զարգացման ծրագրում տեղադրել Մրգաշեն համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Նարգիզ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 06
գ.Մրգաշեն